ՍՄԿԿ XXV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ

Կուսակցության համագումարների շարքում իր առանձնահատուկ, անկրկնելի տեղն ունի ՍՄԿԿ XXV համագումարը։ Դա վերջին տարիների գլխավոր քաղաքական իրադարձությունն էր, որը համաշխարհային պատմական նշանակություն ունի։ Կուտակված փորձի ընդհանրացման հիման վրա համագումարը որոշեց կուսակցության կուրսը առաջիկա տարիների համար։ Հիրավի, ծրագրային փաստաթղթի նշանակություն ունի Կենտկոմի հաշվետվությունը։ Նրանում սահմանված է մեր հասարակարգի քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգևոր զարգացման ստրատեգիան, հիմնավորված է խաղաղության և միջազգային համագործակցության համար պայքարի ծրագիրը, ցույց են տրված սոցիալիզմի սիստեմի, միջազգային կոմունիստական շարժման հետագա առաջընթացի ուղիները։

ՍՄԿԿ XXV համագումարը բազմակողմանիորեն քննարկեց տնտեսական քաղաքականության հիմնական պրոբլեմները, որոշեց կուսակցության տնտեսական ստրատեգիան արդի ժամանակաշրջանում։ Սկզբունքային դիրքերից վերլուծվեցին 9-րդ հնգամյակի արդյունքները, նշվեցին տնտեսական շինարարության հաջողությունները, ինչպես նաև այն թերությունները, դժվարություններն ու չլուծված պրոբլեմները, որոնք պետք է հաղթահարվեն։ Անդրադառնալով ավարտված հնգամյակի արդյունքներին, համագումարը նշեց, որ վերջին հինգ տարում նոր խոշոր առաջընթաց քայլ արվեց կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, ժողովրդի կենսամակարդակի բարձրացման, երկրի անվտանգության ապահովման ուղղությամբ։

Համագումարը հաստատեց Սովետական Միության ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թթ. հիմնական ուղղությունները։ Դա մի կարևոր, խորապես գիտական փաստաթուղթ է, որը որոշում է կուսակցության տնտեսական քաղաքականության սկզբունքային դրույթները 10-րդ հնգամյակում։

Այդ հնգամյակը նոր փուլ է կուսակցության տնտեսական ստրատեգիայի կենսագործման ուղղությամբ։ Այդ ստրատեգիայի գերագույն նպատակը եղել և մնում է ժողովրդի կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացումը։ Հնգամյա պլանն արժանացավ ՍՄԿԿ Կենտկոմի 1976 թ. հոկտեմբերյան պլենումի հավանությանը և հաստատվեց ՍՍՀՄ Գերագույն սովետի սեսիայում։

Մեր հարյուրամյակի արշալույսին, երբ դրվում էին կուսակցության հիմնաքարերը, Վ. Ի. Լենինը, ձևափոխելով Արքիմեդի հայտնի դարձվածքը,

ասել է. «Տվեք մեզ հեղափոխականների կազմակերպություն և մենք շուռ կտանք Ռուսաստանը»։ Վ. Ի. Լենինն ինքը ստեղծեց այդ կազմակերպությունը՝ բոլշևիկների կուսակցությունը։ Եվ ահա, յոթ տասնամյակից ավելի է ինչ գոյություն ունի և գործում է կոմունիստների կուսակցությունը, որը մեծ ու փառավոր ուղի է անցել։ Կուսակցությունը կարողացավ համախմբել աշխատավորներին և երեք հեղափոխությունների բովով նրանց գլուխի տանել ընդդեմ ցարիզմի ու բուրժուազիայի։ Կուսակցության և սովետական ժողովրդի ջանքերով մեր երկրում կառուցվել է զարգացած սոցիալիստական հասարակարգ, իսկ այժմ լուծվում են կոմունիստական շինարարության հրատապ պրոբլեմները։ «Մենք ստեղծել ենք նոր հասարակարգ, մի այնպիսի հասարակարգ, որի նման մարդկությունը դեռ չէր իմացել։ Դա անհգնաժամ, մշտապես աճող էկոնոմիկայի, սոցիալիստական հասուն հարաբերությունների, իսկական ազատության հասարակարգ է։ Դա մի հասարակարգ է, որտեղ տիրապետում է գիտական մատերիալիստական աշխարհայացքը։ Դա մի հասարակարգ է, որն անսասանորեն վստահ է ապագայի, կոմունիստական լուսավոր հեռանկարներին»[1]։ Ո՞րն է մեր կուսակցության այդ հիանալի նվաճումների գրավականը։ Ամենից առաջ այն, որ ՍՄԿԿ-ն իր գործունեության ընթացքում միշտ էլ աներեր կանգնած է եղել և կանգնած է մարքս-լենինյան տեսության ամուր հիմքի վրա, տեսություն, որն օգնում է ճիշտ ստրատեգիա և տակտիկա մշակելու, որոշելու սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման ուղղություններն ամեն մի կոնկրետ ժամանակահատվածում։

Հաջողությունների կարևոր պայմաններից մեկն էլ այն է, որ նա հետևողականորեն պահպանում, ստեղծագործաբար զարգացնում և անշեղորեն կենսագործում է կուսակցական կյանքի լենինյան նորմաներն ու ղեկավարման սկզբունքները։ Եվ պատահական չէ, որ ՍՄԿԿ XXV համագումարի որոշումներում ու փաստաթղթերում, Լ. Ի. Բրեժնևի զեկուցման մեջ, ինչպես նաև համագումարի շատ պատգամավորների ելույթներում զգալի տեղ են գտել կուսակցական շինարարության, զարգացած սոցիալիզմի պայմաններում կոմունիստական կուսակցության զարգացման հարցերը։

Ինչո՞ւ կուսակցությունը, նրա հերթական համագումարն այդքան կարևոր տեղ են տալիս այդ հարցերին։ Մեր հասարակարգի զարգացման ժամանակակից փուլին համապատասխան, ՍՄԿԿ XXV համագումարը տնտեսական, սոցիալական, քաղաքական, գաղափարական և արտաքին քաղաքականության բնագավառներում կուսակցության առջև դրեց նոր, ավելի բարդ և պատասխանատու խնդիրներ։

Համագումարի առաջադրած այս խնդիրները, բնականաբար, պահանջում են գիտական հիմքի վրա կատարելագործելու կուսակցական աշխատանքի ձևերն ու մեթոդները։

ՍՄԿԿ XXV համագումարի որոշումներում հետագա զարգացում ստացան կուսակցական շինարարության լենինյան սկզբունքները։ Մշակելով կուսակցական շինարարության հարցերը, համագումարը ելնում էր այն իրողությու-

---

[1] Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում (Զեկուցում կարդացված ՍՄԿԿ XXV համագումարում, 1976 թ. փետրվարի 24-ին), Երևան, 1976, էջ 144։

նից, որ կոմունիստական շինարարության ընթացքում գնալով ավելի ու ավելի է աճում կոմունիստական կուսակցության ղեկավար դերը, մեծանում է նրա պատասխանատվությունը, ընդլայնվում են նրա առջև ծառացած խնդիրների մասշտաբները։ Եվ պատահական չէ, որ և՛ ՍՄԿԿ XXIV համագումարում, և՛ դրանից հետո ընդունված շատ որոշումներում ու փաստաթղթերում կուսակցությունը մշտական հոգատարություն է ցուցաբերել կուսակցության ղեկավար դերի վերաբերյալ լենինյան ուսմունքի հետագա զարգացման նկատմամբ։ Նույն հետևողականությամբ այդ գիծը շարունակեց ՍՄԿԿ XXV համագումարը։ «Անցած հնգամյակի արդյունքները համոզչորեն վկայում են,— ընդգծվում է համագումարին ՍՄԿԿ Կենտկոմի տված հաշվետվության մեջ,— որ Սովետական Միության կոմունիստական կուսակցությունն ընթացել է լենինյան կուրսով։ Նա ըստ արժանվույն է կատարում բանվոր դասակարգի, բոլոր աշխատավորների, ամբողջ ժողովրդի քաղաքական առաջնորդի դերը։ Վերստին դրսևորվեցին կուսակցության գիտական կանխատեսման ուժն ու քաղաքականության ռեալիզմը, մասսաների եռանդը կոմունիստական շինարարության խնդիրների լուծմանը նպատակամղելու նրա ունակությունը»[2]։

ՍՄԿԿ XXV համագումարի առաջադրած նոր, վիթխարի խնդիրները հաջողությամբ կյանքի կոչելու համար, կուսակցությունը այսուհետև էլ պետք է ապահովի իր ղեկավար դերը, որպես սովետական հասարակարգի առաջատար քաղաքական ուժ։ Կուսակցության ղեկավար, մոբիլիզացնող դերը, ինչպես համագումարում ընդգծեց Լ. Ի. Բրեժնևը, վերացական հասկացություն չէ։ Դա ինքը կյանքն է, մեր առօրյա պրակտիկան։

Կուսակցական շինարարության արմատական հարցերից մեկը կուսակցության անդամության հարցն է։ Հիշենք Վ. Ի. Լենինի խոսքերը, ասված կուսակցության II համագումարում. մենք պետք է աշխատենք ավելի ու ավելի բարձրացնել կուսակցության անդամի կոչումն ու նշանակությունը[3]։ ՍՄԿԿ XXV համագումարը լայն պլանով քննարկեց ՍՄԿԿ անդամության հարցը, իրավացիորեն ընդգծելով, որ կուսակցության ուժը նրա անդամների գաղափարայնության մեջ է։

Իսկ ինչպես, ի՞նչ ձևով կարելի է բարձրացնել կուսակցության անդամի կոչումը, ապահովել կոմունիստների ավանգարդային դերը։ Ամենից առաջ կուսակցության սոցիալական կազմի կարգավորման միջոցով։ Մեր առաջընթացին զուգընթաց մշտապես աճում և զարգանում է կուսակցությունը, իր շարքերը համալրելով բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության լավագույն ներկայացուցիչներով։ Այդպես էր նաև ՍՄԿԿ XXIV համագումարից հետո։ Ահա փաստերը։ 5 տարում ՍՄԿԿ-ի մեջ է ընդունվել գրեթե 2,6 միլիոն մարդ։ XXV համագումարի նախօրյակին կուսակցության մեջ կար 15 միլիոն 694 հազար կոմունիստ։ Նրանց 41,6%-ը բանվորներ են, 13,9%-ը՝ կոլտնտեսականներ, մոտ 20%-ը՝ տեխնիկական մտավորականության ներկայացուցիչներ, ավելի քան 24%-ը՝ գիտության, գրականության, արվեստի գործիչներ, լուսավորության, առողջապահության, կառավարման ապարատի աշխատողներ և զինվորականներ։

---

2 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը..., էջ 102։
3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 642։

Կուսակցությունը միշտ էլ կարգավորող ներգործություն է ունենում իր շարքերի աճի նկատմամբ։ Կարգավորելով իր սոցիալական կազմը, կուսակցությունը հետևողականորեն վարում է այնպիսի գիծ, որ առաջատար գերը պատկանի բանվոր դասակարգին։ Այդ գիծը հետևողական կերպով կենսագործվում է մանավանդ վերջին տարիներին։ Եթե 1971 թ., ՍՄԿԿ XXIV համագումարի նախօրյակին, կուսակցության մեջ բանվորները կազմում էին 40,19%, ապա 1976 թ.՝ 41,6%։ Ինչպես նշվեց ՍՄԿԿ XXV համագումարում, ներկայումս կուսակցության շարքերն ընդունվողների 58%-ը բանվորներ են։ Ըստ որում, արդյունաբերական խոշոր կենտրոններում այդ տոկոսն ավելի բարձր է։ Այսպես, Կույբիշևի, Չելյաբինսկի, Դոնեցկի, Կարագանդայի մարզերում նոր ընդունվողների մեջ բանվորները կազմում են 65—70 և ավելի տոկոս[4]։

Հայաստանի կոմունիստական կուսակցության մեջ նույնպես հարաճուն ավելանում է բանվորների թիվը։ Վերջին 5 տարում Հայաստանի կոմկուսը աճել է 12.606 մարդով և այժմ իր շարքերում ունի 142.959 կոմունիստ։ Բոլոր կոմունիստների 66,1%-ը աշխատում է նյութական արտադրության ոլորտում։ Հանրապետության կուսակցական կազմակերպության կազմի 36%-ը բանվորներ են։ Համեմատության համար նշենք, որ ՀԿԿ XXV համագումարի նախօրյակին բանվորների թիվը կազմում էր 32,7%։ Եթե Հայաստանի կոմկուսի XXIV և XXV համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում թեկնածու ընդունվածների թվում բանվորները կազմել են 46,3%, ապա այժմ՝ 57,7%[5]։ Վերջին 5 տարում Երևանում կուսակցության մեջ ընդունված բանվորների թիվն ավելացել է 8,7%-ով[6], Լենինականի կուսակցական կազմակերպության մեջ վերջին տարիներին ընդունվածների երկու երրորդից ավելին բանվորներ են[7]։

Այսպիսով, ՍՄԿԿ կարգավորիչ աշխատանքի շնորհիվ կուսակցության մեջ հետևողականորեն ավելանում է բանվորների թիվը։ ՍՄԿԿ XXV համագումարը կրկին ընդգծեց, որ այդ գիծը առաջիկայում ևս անշեղորեն կշարունակվի։

Նախ, դա բխում է կուսակցության բնույթից, որն իր ծագմամբ, իդեալներով, նպատակներով ու խնդիրներով, ինչպես նաև դասակարգային բնույթով շարունակում է մնալ բանվոր դասակարգի կուսակցությունը։ Այն արտահայտում է առաջին հերթին բանվոր դասակարգի շահերը։ «Զարգացած սոցիալիզմի պայմաններում,— համագումարում նշել է Լ. Ի. Բրեժնևը,— երբ կոմունիստական կուսակցությունը դարձել է ամբողջ ժողովրդի կուսակցությունը, նա բնավ չի կորցնում իր դասակարգային բնույթը։ Իր էությամբ ՍՄԿԿ-ն եղել է և մնում է բանվոր դասակարգի կուսակցությունը»[8]։

Երկրորդ, դա օրինաչափ երևույթ է, որը համապատասխանում է հասարակական կյանքում բանվոր դասակարգի ունեցած տեղին ու դերին։

---

4 «Партийная жизнь», 1976, № 6, էջ 15։

5 Կ. Ս. Դեմիրճյան, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVI համագումարին, Երևան, 1976, էջ 135—136։

6 «Երեկոյան Երևան», 10. I. 1976։

7 «Սովետական Հայաստան», 13. XII. 1975։

8 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը..., էջ 103։

Բանվոր դասակարգը մեր հասարակության առաջատար ուժն է։ Լինելով Սովետական Միության ամենաբազմամարդ դասակարգը, նա եղել է ու մնում է հասարակության գլխավոր արտադրողական ուժը։ Կապված լինելով սոցիալիստական սեփականության ավելի բարձր ձևի հետ, բանվոր դասակարգի հիմնական մասը զբաղված է նյութական արտադրության վճռական ոլորտում և ստեղծում է հասարակական հարստության մեծ մասը։ Բանվոր դասակարգի առաջավոր դիրքը որոշվում է նաև նրա հեղափոխականությամբ, կարգապահությամբ, կազմակերպվածությամբ և կոլեկտիվիզմով։ Կուսակցությունն ամեն ինչ անում է, որպեսզի մեր կյանքի բոլոր բնագավառներում աճի ու ամրապնդվի բանվոր դասակարգի ազդեցությունը։

Բանվոր դասակարգի առաջատար դերը կենսագործվում է կոմունիստական կուսակցության միջոցով, որը դարձել է ամբողջ ժողովրդի կուսակցությունը։ Մեր հաջողության գրավականներից մեկն էլ կուսակցության սերտ կապն է մասսաների հետ, նրա անսահման նվիրվածությունը բանվոր դասակարգի, բոլոր աշխատավորների շահերին, հավատը՝ ժողովրդի ստեղծագործական ուժերի նկատմամբ։ Այդ մասին ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը կուսակցության XXV համագումարում ասել է. «Սովետական մարդիկ գիտեն. այնտեղ, որտեղ դժվարություններ կան, այնտեղ առջևում կոմունիստներն են։ Սովետական մարդիկ գիտեն. ինչ էլ պատահելիս լինի, կոմունիստները հուսախաբ չեն անի։ Սովետական մարդիկ գիտեն. այնտեղ, որտեղ կուսակցությունն է, այնտեղ հաջողություն է, այնտեղ հաղթանակ։ Ժողովուրդը վստահում է կուսակցությանը։ Նա ամբողջովին պաշտպանում է կուսակցության ներքին ու արտաքին քաղաքականությունը։ Եվ դա տասնապատկում է կուսակցության ուժերը, անսպառ եռանդի աղբյուր ծառայում նրա համար»[9]։

Այսպիսով, երկրի զարգացման, հասարակության առաջընթացին համապատասխան, ընդլայնվում են կուսակցության շարքերը, ավելանում է նրա անդամների թիվը, աճում նրանց կրթական մակարդակը։ Բավական է նշել, որ վերջին 30 տարում ՍՄԿԿ-ի թվակազմն աճել է գրեթե երեք անգամ։ Հասկանալի է, որ առաջիկայում էլ կշարունակվի նրա շարքերի հետագա աճը։ Սակայն ՍՄԿԿ-ն չի արագացնում իր թվական աճը։ Մեր օրերում, երբ մեծացել ու որակապես աճել է կուսակցության սոցիալական բազան, երբ գնալով մեծանում են ինչպես կուսակցության, այնպես էլ առանձին կոմունիստների դերն ու պատասխանատվությունը, կուսակցական կազմակերպությունները պետք է ավելի մեծ ուշադրություն նվիրեն ընդունելության հարցերին, առաջիկայում ևս կարգավորող ներգործություն ունենան այդ կարևոր գործի հանդեպ, ըստ ամենայնի բարելավեն կուսակցության որակական կազմը։

Այդ աշխատանքը պետք է ընթանա հետևյալ ուղղություններով։

Առաջին, կուսակցության շարքերը համալրելիս պետք է այսուհետև ևս խստիվ պահպանել անհատական ընտրության սկզբունքը։ Դա հնարավորություն կտա ընդունել միայն ամենաարժանավորներին, նրանց, ովքեր կուսակցության շարքերն են մտնում, Վ. Ի. Լենինի բառերով ասած, ոչ թե որևէ շահ ստանալու համար, այլ հանուն կոմունիզմի օգտին կատարվող անձնվեր աշխատանքի։

---

9 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը..., էջ 145։

Երկրորդ, անհրաժեշտ է ավելի ու ավելի բարձրացնել պահանջկոտությունը։ Եվ դա միանգամայն օրինաչափ է։ Կուսակցության հեղինակության և դերի հետագա աճը, նրա առջև կանգնած խնդիրների բազմազանությունը և բարդությունը նորանոր պահանջներ են ներկայացնում կոմունիստներին, որպեսզի կուսակցության անդամների թիվն ավելանա այն մարդկանց հաշվին, ովքեր արժանացել են կոլեկտիվի ճանաչմանը։ «Մենք չպետք է մոռանանք,—նշվեց ՍՄԿԿ XXV համագումարում,—որ ամեն մի կոմունիստ պետք է լինի կուսակցության բարձր գաղափարական, ակտիվ մարտիկը, կոմունիզմ կառուցողների շարքի աջթևայինը»[10]։

Երրորդ, սկզբունքային նշանակություն ունի ՍՄԿԿ XXV համագումարի ցուցումը թեկնածուական ստաժի նշանակությունը բարձրացնելու մասին։ Թեկնածուական ժամանակաշրջանը պատասխանատու և անմոռանալի ժամանակաշրջան է։ Այդ ժամանակամիջոցում համակողմանիորեն պետք է ստուգվեն թեկնածուի քաղաքական ու գործարար հատկանիշները, կուսակցական կազմակերպությունները լուրջ կերպով պետք է զբաղվեն նրանց մարքսլենինյան դաստիարակության խնդիրներով։ Գաղտնիք չէ, որ երբեմն դեռևս իրեն լիովին չդրսևորած, պաշտոնական ու հասարակական պարտականություններին անբարեխղճորեն վերաբերվող թեկնածուներին փոխագրում են կուսակցության շարքերը։

Չորրորդ, անհրաժեշտ է ժամանակին աղատվել նրանցից, ովքեր չեն արդարացնում կուսակցության անդամի բարձր կոչումը, խախտում են կուսակցական և պետական կարգապահությունը։

ՍՄԿԿ կազմակերպական կառուցվածքի ղեկավար սկզբունքը դեմոկրատական ցենտրալիզմն է։ Մեր օրերում կուսակցության գործունեության մեջ այդ սկզբունքը դրսևորվում է ներկուսակցական դեմոկրատիայի հետևողական ծավալման, կոլեկտիվ ղեկավարման կատարելագործման, կուսակցության շարքերի գաղափարական և կազմակերպական միասնության հետագա ամրապնդման մեջ։ Կյանքի կոչելով կուսակցական շինարարության վերաբերյալ ՍՄԿԿ XXIII և XXIV համագումարների ցուցումները, կուսակցությունը վարում է ներկուսակցական դեմոկրատիայի հետևողական ծավալման գիծ։ Կուսակցության մեջ հաստատվել և ամրապնդվել է տեղական և կենտրոնական մարմինների ձևավորման հետևողական դեմոկրատական կարգ։

Կուսակցական կոմիտեների ու բյուրոների, սկզբնական և արտադրամասային կազմակերպությունների, կուսակցական խմբերի ընտրություններին, իբրև կանոն, մասնակցում են կոմունիստների ճնշող մեծամասնությունը։ Այս հանգամանքը առանձնակի ուժով դրսևորվեց ՍՄԿԿ XXV համագումարի նախօրյակին անցկացված հաշվետու-ընտրական կամպանիայի ժամանակ։ Դա ներկուսակցական դեմոկրատիայի ծավալման, կոմունիստների ակտիվության բարձրացման դրսևորումներից է։ Կոմունիստների աճած ակտիվության, սխալների ու թերությունների հաղթահարման նկատմամբ նրանց շահագրգռվածության մասին ակնառու կերպով վկայում է այն, որ սկզբնական կուսակցական կազմակերպությունների հաշվետու-ընտրական ժողովներին մասնակցել է կոմունիստների ավելի քան 94%-ը, իսկ մտքերի փոխանակությանը՝ ներկա գտնվողներից յուրաքանչյուր չորրորդը[11]։ Մի շարք

10 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը..., էջ 105։
11 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը..., էջ 106—107։

հանրապետություններում այդ տոկոսը ավելի բարձր է։ Այսպես, Էստոնիայում հաշվետու-ընտրական ժողովներին մասնակցել է կոմունիստների 96%-ը, Հայաստանում՝ 95%-ը[12], ելույթ է ունեցել մոտ 34 հազար մարդ[13]։

Դեմոկրատական ցենտրալիզմի կարևոր կողմերից մեկն էլ կոլեգիալությունն է։ Դա կուսակցական ղեկավարման բարձրագույն սկզբունքն է։ ՍՄԿԿ XXV համագումարի փաստաթղթերում, պատգամավորների ելույթներում իրավացիորեն նշվեց, որ ընդլայնվել, ամրապնդվել և խորացել է ղեկավարման կոլեկտիվությունը։ Այն առաջին հերթին իրագործվում է նրանով, որ կուսակցության քաղաքական գիծը որոշվում է կոլեգիալ մարմինների՝ համագումարների, կոնֆերանսների, Կենտկոմի պլենումների կողմից։

Կուսակցության գործունեության մեջ բացառիկ դեր ունեն Կենտկոմի պլենումները, որոնք քննարկում են երկրի ու կուսակցության համար հրատապ նշանակություն ունեցող, հասունացած պրոբլեմները։ ՍՄԿԿ XXIV համագումարից հետո տեղի է ունեցել Կենտրոնական կոմիտեի 11 պլենում։ Դրանցում քննարկվել և լուծվել են կուսակցության և ամբողջ երկրի կյանքի կարևորագույն հարցերը։ Վերջին տարիներին լավ սովորույթ է դարձել տարվա վերջում հրավիրել պլենում և վերլուծել կատարվածը, որոշել գալիք խնդիրները։ Այս իմաստով առանձնահատուկ նշանակություն ունեցան Կենտկոմի 1972, 1973, 1974 և 1975 թթ. դեկտեմբերյան պլենումները, որոնք կուսակցությանը դիմեցին տնտեսական հասունացած պրոբլեմների կոնկրետ վերլուծությամբ, կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրեցին այն խնդիրների վրա, որոնք անհրաժեշտ է լուծել առաջին հերթին։ Մի շարք պլենումներում քննարկվել են կուսակցության արտաքին-քաղաքական գործունեության հարցերը։

Կուսակցության, սովետական ամբողջ ժողովրդի համար առանձնահատուկ նշանակություն ունի ՍՄԿԿ Կենտկոմի 1976 թ. հոկտեմբերյան պլենումը, որը քաղաքական տեսանկյունից գնահատեց 10-րդ հնգամյա պլանը և որոշեց նրա կատարման առավել արդյունավետ տակտիկան։

Լիարյուն կերպով, մեծ արդյունավետությամբ են գործում նաև Կենտկոմի քաղբյուրոն և քարտուղարությունը։ Այդ կոլեգիալ մարմինները XXIV համագումարից հետո իրենց ավելի քան 400 նիստերում քննարկել են տնտեսական, քաղաքական, արտաքին քաղաքականության, կուսակցական շինարարության մի շարք հրատապ հարցեր։ Կոլեկտիվության իսկական մարմնացում էր հենց ՍՄԿԿ XXV համագումարը, որին մասնակցեց մոտ 5000 պատգամավոր։ Համագումարում ներկայացված էին հանրապետական, երկրամասային և մարզային կազմակերպությունները, ժողովրդական տնտեսության, կուլտուրայի, հասարակական կյանքի բոլոր բնագավառները, կոմունիստների տարբեր սերունդները։ Պատգամավորները, ըստ էության, արտահայտում էին կուսակցության կոլեկտիվ միտքն ու կամքը։ Եվ ՍՄԿԿ XXV համագումարը, ընդհանրացնելով կուտակված փորձը, հենվելով այդ կոլեկտիվ մտքի վրա, որոշեց կուսակցության ներքին ու արտաքին քաղաքականության հերթական խնդիրները։

---

12 Նկատենք, որ ՀԿԿ XXV համագումարի նախորդակին կազմում էր 91%։

13 Կ. Ս. Դեմիրճյան, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի հաշվետու զեկուցումը..., էջ 119։

Կուսակցության կարևոր օղակներն են տեղական մարմինները՝ շրջկոմները, քաղկոմները, մարզկոմները, երկրամասային կոմիտեները և միութենական հանրապետությունների կոմկուսների Կենտկոմները։ Լինելով քաղաքական և կազմակերպական ղեկավարման մարմիններ, նրանք նույնպես գործում են կոլեկտիվիզմի լենինյան սկզբունքով։

Գնալով բարձրանում է տեղական կոմիտեների պլենումների և բյուրոների՝ որպես կոլեգիալ մարմինների, դերը։ Նրանցում քննարկվում են տնտեսական, քաղաքական, կուլտուրական և կազմակերպական-քաղաքական աշխատանքի հասունացած պրոբլեմները։ Ըստ որում, վերջին տարիներին պլենումները հրավիրվում են պարբերաբար, դարձել են ավելի օպերատիվ ու արդյունավետ, ավելի գործնական։ Վերցնենք ՀԿԿ Կենտկոմի օրինակը։ Պարբերաբար, կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, հրավիրվում են Կենտկոմի պլենումներ, որոնք քննարկում են հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող հարցեր։ Ըստ որում, յուրաքանչյուր պլենումի նախորդում է նախապատրաստական մեծ աշխատանք։ Քննարկվող հարցերը նախապատրաստվում են ամենայն մանրամասնությամբ ու պահանջկոտությամբ։ Հարցերի ու որոշումների նախապատրաստմանն ու քննարկմանը մասնակցում են կուսակցական մարմինների անդամները, մեծ թվով ակտիվիստներ, մասնագետներ, բանվորներ ու գյուղացիներ։ Այսպիսով, պլենումների որոշումները, ըստ էության, դառնում են կոլեկտիվ մտքի արդյունք։

Հանրապետության կուսակցական կազմակերպությունների կյանքում կարևոր իրադարձություն եղավ ՀԿԿ Կենտկոմի 1975 թ. հունվարյան պլենումը։ Բանն այն է, որ վերջին տարիներին հանրապետության կուսակցական կազմակերպության աշխատանքում տեղ էին գտել լուրջ թերություններ ու սխալներ, որոնք դրսևորվում էին տնտեսական և կուլտուրական շինարարության ղեկավարման, կուսակցական-կազմակերպական աշխատանքում։ Առանձին դեպքերում տեղի էին ունեցել կուսակցական ղեկավարման սկզբունքների և կուսակցական կյանքի նորմաների խախտումներ, լուրջ վնաս էր հասցվել կադրային քաղաքականությանը, ստեղծվել էր ամեն ինչ ներելու և անպահանջկոտության մթնոլորտ։ Այս ամենը, ինչ խոսք, լրջորեն վնասում էր գործին, խոչընդոտում մեր առաջընթացը։ Հունվարյան պլենումը քննադատաբար վերլուծեց թերությունների պատճառները, համարձակորեն, առանց թաքցնելու, ճշմարտությունն ասաց կուսակցական կազմակերպությանը, հանրապետության աշխատավորներին։ Պլենումը մշակեց կազմակերպական և գաղափարական աշխատանքի մակարդակը բարձրացնելու, մեր կյանքում տեղ գտած բացասական երևույթները վերացնելու գործուն ու արդյունավետ միջոցառումներ, որոնք դարձան կուսակցական կազմակերպությունների գործունեության մարտական ծրագիրը։ Պլենումի որոշումների կենսագործման ուղղությամբ կատարված աշխատանքի առաջին արդյունքներն ամփոփեց ՀԿԿ XXVI համագումարը։

Հավանություն տալով պլենումի դրույթներին ու հետևություններին, համագումարը կուսակցական կազմակերպությունների առաջնահերթ խնդիրը համարեց իրականացնել պլենումի որոշումները։

Գաղափարական աշխատանքի հարցերը համակողմանիորեն քննարկվեցին ՀԿԿ Կենտկոմի 1976 թ. հոկտեմբերյան պլենումում։

Այսպիսով, մեր կուսակցության գործունեությունը խարսխվում է դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան սկզբունքի վրա, որն անհրաժեշտ է առանց ներկուսակցական դեմոկրատիայի հետևողական ծավալման, առանց կոլեկտիվ ղեկավարման սկզբունքի հետագա խորացման։ Անշեղորեն կիրառելով այդ նորմաները, կուսակցությունը հաջողությամբ գլխավորում է սովետական ժողովրդի պայքարը համագումարի կանխագծումների կատարման համար, ամրապնդում իր շարքերի գաղափարական և կազմակերպական միասնությունը, որը մեր հետագա հաջողությունների գլխավոր երաշխիքն է։ Կոմունիստական կուսակցությունը խնամքով պահպանում, զարգացնում և անշեղորեն կենսագործում է դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան սկզբունքը, որը դարձել է կուսակցության կյանքի օրենքը։

ՍՄԿԿ XXV համագումարը վերստին հավաստեց, որ ղեկավարման հաջողության կարևոր պայմանը աշխատանքի լենինյան ոճն է, որով ներթափանցված է կուսակցության ողջ գործունեությունը։ Այստեղ կանդրադառնանք այդ ոճի այնպիսի կարևոր կողմերին, ինչպիսիք են քննադատության և ինքնաքննադատության զարգացումը, կուսակցության կադրային քաղաքականության հարցերը։

Վերևում հանգամանորեն խոսվեց կոլեկտիվ ղեկավարման սկզբունքի մասին։ Կոլեգիալությունը, սակայն, չի բացառում սխալները, որոնք անխուսափելի են մի այնպիսի նոր ու վիթխարի գործում, ինչպիսին կոմունիզմի կառուցումն է։ Կուսակցությունը գործող օրգանիզմ է և չի կարող լիովին ապահովված լինել սխալներից ու թերություններից։ Դրանք հաղթահարելու կարևոր միջոցը քննադատությունն ու ինքնաքննադատությունն է, որը աշխատանքի լենինյան ոճի անկապտելի գծերից է։

Կուսակցությունը, նրա Կենտրոնական կոմիտեն, լենինյան ցուցումների հիման վրա, մշտապես սևեռուն ուշադրություն են դարձրել քննադատության և ինքնաքննադատության հարցերին։ Մեր օրերում, երբ մեծացել են լուծվող խնդիրների մասշտաբները, կուսակցության առջև ծառացել են վիթխարի պրոբլեմներ և՛ ներքին կյանքում, և՛ արտաքին քաղաքականության բնագավառում, առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում գործի նկատմամբ քննադատական մոտեցումը, այլ խոսքով քննադատության ու ինքնաքննադատության հետևողական ծավալումը։ Դա ներկուսակցական դեմոկրատիան զարգացնելու փորձված մեթոդներից մեկն է։ Զարմանալի չէ, որ վերջին տարիներին ՍՄԿԿ Կենտկոմի պլենումներում լուրջ, սկզբունքային խոսակցություն է եղել քննադատության ու ինքնաքննադատության մասին։ Հիշենք ՍՄԿԿ Կենտկոմի հայտնի որոշումը՝ «Տամբովի մարզային կուսակցական կազմակերպությունում քննադատության և ինքնաքննադատության վիճակի մասին», որի նշանակությունը դուրս է գալիս մարզային կազմակերպության շրջանակներից։ Նրանում առաջադրված շատ դրույթներ համակուսակցական նշանակություն ունեն։

Անվիճելի է այն իրողությունը, որ այժմ նպաստավոր պայմաններ կան քննադատության ծավալման համար։ Կուսակցական կազմակերպությունների գործունեության մեջ ավելի ու ավելի մեծ տեղ է գրավում սխալներն ու թերությունները վերացնելու այդ փորձված միջոցը։ Կոմունիստները քննադատում են նրանց, ովքեր պետական և հասարակական կազմակերպությունների ղեկավարման գործում թույլ են տալիս կոպիտ սխալներ, կորցնում պատաս-

խանատվության զգացումը, խախտում պետական և կուսակցական կարգապահությունը։ Կուսակցական մարմինների մեծ մասն այժմ, ավելի քան երբևէ, մեծ նշանակություն են տալիս կոմունիստների քննադատական դիտողություններին ու առաջարկություններին, արդյունավետ ու կոնկրետ քայլեր ձեռնարկում դրանք կենսագործելու համար։ Այդ հանգամանքը ոչ միայն նպաստում է քննադատության և ինքնաքննադատության ծավալմանը, այլև բարձրացնում է կոմունիստների ակտիվությունը։

ՍՄԿԿ XXV համագումարը խնդիր դրեց ըստ ամենայնի զարգացնել քննադատությունն ու ինքնաքննադատությունը, որպես կուսակցական կազմակերպությունների մարտունակությունը բարձրացնելու, մասսաների վրա նրանց ազդեցությունն ուժեղացնելու գլխավոր միջոցներից մեկը։

Քննադատական մոտեցման դպրոց էր հենց ՍՄԿԿ XXV համագումարը։ Ե՛վ հաշվետվության մեջ, և՛ պատգամավորների ելույթներում խստապահանջությամբ, սկզբունքայնությամբ, կոմունիստական ուղղամտությամբ խոսվեց մեր կյանքի տարբեր բնագավառներում եղած թերությունների մասին։

Ե՛վ Տամբովի մարզային կազմակերպության վերաբերյալ հայտնի որոշման մեջ, և՛ ՍՄԿԿ XXV համագումարում հատուկ ուշադրություն նվիրվեց քննադատության և ինքնաքննադատության մեթոդի էության հարցին։ Տեսնենք, թե ո՞րն է այդ մեթոդի էությունը, ինչպիսի՞ն պետք է լինեն քննադատությունը և ինքնաքննադատությունը, կուսակցությունը ի՞նչ պահանջներ է ներկայացնում քննադատությանն ու ինքնաքննադատությանը։ Այս հարցերի հստակ պատասխանը մենք գտնում ենք Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ։ Լ. Ի. Բրեժնևի շարադրած դրույթները ստեղծագործորեն զարգացնում են մարքս-լենինյան տեսությունը քննադատության և ինքնաքննադատության վերաբերյալ։ Համագումարը նորովի մեկնաբանեց այդ մեթոդի բուն էության հարցը։

Քննադատությունն առաջին հերթին պետք է օբյեկտիվ լինի։ Այս կամ այն կազմակերպության կամ աշխատողի հասցեին քննադատությամբ հանդես եկող յուրաքանչյուր ոք պետք է օբյեկտիվորեն գնահատի նրանց գործունեության բոլոր կողմերը։ Եթե քննադատությունն իր մեջ պարունակում է սուբյեկտիվիզմի թեկուզ և աննշան տարր, այն արդյունավետ, գործուն լինել, որոշակի ազդեցություն ու հետք թողնել չի կարող։ Այլ խոսքով, քննադատությունը պետք է գործին օգնող լինի, հետապնդի ազնիվ նպատակներ։

Քննադատության ժամանակ պետք է համակողմանիորեն վերլուծվեն եղած թերությունները և դրանք վերացնելու նպատակով մշակվեն կոնկրետ միջոցառումներ. քննադատությունը չպետք է ինքնանպատակ լինի։ Հակառակ դեպքում քննադատությունը սոսկ ձևական բնույթ կկրի։ Կարևորը ոչ թե քննադատելը կամ թերությունները հայտնաբերելն է, այլ դրանք վերացնելը, աշխատանքի բարելավումը։

Շատ կարևոր է մի հանգամանք ևս։ Ոչ մի դեպքում չպետք է թույլ տալ լիբերալ վերաբերմունք թերությունների և դրանց համար մեղավորների հանդեպ։ Գաղտնիք չէ, որ երբեմն կոմունիստները, կոլեկտիվները սկզբունքայնությամբ, սրտացավությամբ բացահայտում են թերությունները, նշում մեղավորներին, բայց գործը տեղից չի շարժվում։ Առանձին օղակներում ցուցաբերում են անվճռականություն, հանդես են գալիս մարդիկ, որոնք բռնում են ամեն ինչ ներելու անթույլատրելի ուղին։ «Մարդկանց նկատմամբ վստա-

հությունն ու հարգանքը,— նշվեց համագումարում,— պետք է զուգորդվեն հանձնարարված գործի համար բարձր պահանջկոտության հետ։ Սա կուսակցական և ոչ միայն կուսակցական, այլև մեր ամբողջ աշխատանքի օրենքն է»[14]։

Քննադատությունն արժեք ունի միայն այն դեպքում, եթե ճշմարտացի է։ Շիտակ, ճշմարտացի քննադատությունը կուսակցական կարգապահությունն ամրապնդելու արդյունավետ միջոցներից մեկն է։ Քննադատության ժամանակ բարձրացվող հարցերը պետք է հասարակական նշանակություն ունենան։

Քննադատությունը միշտ կապված է ինքնաքննադատության հետ, հանգես է գալիս նրա հետ միասին, առանց մեկի չկա մյուսը։ Կյանքում պատահում է նաև հակառակը։ Ոմանք սիրում են քննադատել ուրիշներին, բայց խուսափում են ինքնաքննադատությունից կամ էլ հանդես են գալիս ինքնաքննադատությամբ, նշում թերությունները և դրանով էլ գործը ավարտված համարում։ Նման դեպքերը նկատի ուներ ՍՄԿԿ XXV համագումարը, երբ մեծ տեղ հատկացրեց ինքնաքննադատության հարցին, իրավացիորեն նշելով, որ ինքնաքննադատության արժեքավորությունը որոշվում է նրա անկեղծությամբ, այն բանով, որ ինքնաքննադատությամբ հանդես եկող ամեն ոք պետք է ոչ միայն ընդունի թերությունները, այլև անհապաղ ձեռնամուխ լինի սխալների ու թերությունների շտկման անհրաժեշտ գործին։

ՍՄԿԿ XXV համագումարը բազմակողմանիորեն հիմնավորեց կազմակերպական աշխատանքի մի այնպիսի կարևոր սկզբունք, ինչպիսին կադրային քաղաքականությունն է։ Սովետական կոմունիստների համաժողովը կուսակցության կադրային քաղաքականությունը բնորոշեց որպես մի հզոր լծակ, որի միջոցով կուսակցությունը ներգործում է հասարակական զարգացման ընթացքի վրա։

Ինչպիսի՞ն պետք է լինի ղեկավար աշխատողը, ի՞նչ պահանջներ են ներկայացվում կադրերին մեր օրերում։

Զարգացած սոցիալիզմի պայմաններում, երբ սովետական ժողովուրդը և կուսակցությունը լուծում են վիթխարի խնդիրներ, աճում են նաև պահանջները կադրերի նկատմամբ։ Համագումարը վերստին ընդգծեց, որ ժամանակակից ղեկավարը պետք է օժտված լինի լենինյան լավագույն գծերով. նրա գործունեության մեջ կուսակցականությունը պետք է սերտորեն զուգորդվի բանիմացության հետ, կարգապահությունը՝ նախաձեռնության և գործի նկատմամբ ստեղծագործական մոտեցման հետ։ Շատ կարևոր է, որ ղեկավարը հաշվի առնի գործի և՛ սոցիալ-քաղաքական, և՛ դաստիարակչական կողմերը, զգայուն լինի մարդկանց, նրանց կարիքների ու պահանջմունքների նկատմամբ, օրինակ՝ ծառայի և՛ աշխատանքում, և՛ կենցաղում[15]։

Մենք շոշափեցինք կուսակցական շինարարության մի քանի հարցեր՝ առնչված ՍՄԿԿ XXV համագումարի հետ։ Կուսակցության գործունեության, նրա փորձի ստեղծագործական ընդհանրացումը համագումարի կողմից որոշակի ավանդ է կուսակցության վերաբերյալ լենինյան ուսմունքի մեջ։ Կասկածից վեր է, որ կուսակցական շինարարության վերաբերյալ համագումարի

---

14 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը..., էջ 113։

15 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը..., էջ 115—116։

ղեկավար ցուցումների անշեղ կատարումը կամրապնդի կուսակցության մարտունակությունը, էլ ավելի ներգործուն կդարձնի նրա ղեկավար դերը մեր կյանքի բոլոր բնագավառներում, նպաստավոր պայմաններ կստեղծի 10-րդ հնգամյակի վեհ խնդիրները կենսագործելու համար։

XXV СЪЕЗД КПСС И НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПАРТИЙНОГО СТРОИТЕЛЬСТВА

ГРИГОР АЙВАЗЯН

Резюме

XXV съезд КПСС знаменует собой новую историческую веху в развитии советского общества на пути к коммунизму. В материалах съезда дан глубокий и всесторонний анализ огромной работы, проделанной партией за последний период, определен политический курс нашей партии па предстоящие годы. Съезд поставил перед коммунистической партией новые и сложные задачи, которые требуют дальнейшего повышения уровня руководства обществом, всемерного совершенствования форм и методов партийной работы.

XXV съезд КПСС уделил огромное внимание вопросам партийного строительства. В решениях и материалах съезда содержатся важные положения о руководящей роли партии в коммунистическом строительстве, о закономерностях развития партии, о кадровой политике, о дальнейшем развитии внутрипартийной демократии. XXV съезд внес новый вклад в дальнейшее творческое развитие ленинского учения о партии.